

ԱՆՆԵՏԱՑԱԾ ՀԱՅ ԳԱՂՈՒԹՆԵՐ ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ

(Ճամբորդի նոթեր)



մեն տարի բյուրավոր այցելուներ աշխարհի զանազան կողմերեն Հնդկաստանի Ակրա քաղաքը կերթան՝ գերահռչակ թաջ Մահալը տեսնելու:

Մարտ 9-ին նա ալ Դելհին հոն գացի: Իմ նպատակը սակայն մահմեդական արքայի մը իր կնոջ համար կառուցած կոթողական մահարձան մը տեսնել չէր, այլ հայկական բեկորներ, հիշատակարաններ ուրոնել, որոնք, այնպիսի բոլորովին մոռացության մատնված են:

Ու հիմա՝ ակնարկ մը հայ Ակրայի պատմության: Հայեր, շատ հին ժամանակներից իվել, Նուշիդի մահմեդականներու արշավանքներեն առաջ (Ժ դար) հարաբերության մեջ եղած են Հնդկաստանի հետ, բայց բնակություն չեն հաստատած, այլ վաճառականություն ըրած և վերադարձած են իրենց Հայրենիքը:

Աքբար հռչակավոր թագավորին օրով (1556—1605) էր, որ հայերը սկսան գաղթել Հնդկաստան: Արքան, գնահատելով հայերու ընդդեմ ուշիմությունը և ձեռնարկները, միջոցներ հայթայթեց, որ անոնք բնակին իր մարաթաղաքը Ակրա: Ան տեսնելով, որ հայերը ջերմեռանդորեն վազված են իրենց Նկեղեցիին, իր Կսկ փափագով 1562-ին Ակրայի մեջ անոնց եկեղեցի մը կառուցանել տվավ: Աքբարի օրով Ակրայի դրխավոր դատախազը Աբդուլ, որ Միր Աբլ ալ կոչված է, հայ էր ազգով: Աբդուլ հայ դատախազին դուստրը, Աքբար թագավորի կարգադրությամբ, 1590-ին ամուսնացավ Իսկենդեր անուն լեզվագետ հայու մը հետ, որ հայկացի վաճառական մըն էր և Աքբար թագավորին մոտ լինվորական ծառայության մեջ մտած: Իսկենդերի անդրանիկ տղին՝ Միրզա՝ հնդկահայոց ամենին նշանա-

վոր և անվանի հայր հանդիսացավ Ջիհանկիր և Ջեհան թագավորներու օրով, որոնք Աքբարի հաջորդեցին. ան Մոկուլ թագավորներու պալատի ամենեն ազդեցիկ մարդը եղավ: Իբրև կառավարիչ Ակրայի, Դելհիի և Լահորի, մեծ համբավ թողուց Մոկուլ թագավորներու մոտ: Բարի և վրոնասեր ըլլալով, Նուշիդի լատին եկեղեցականներ հիացած են իր առաքինությանց վրա և անվանած են զինք «առաքյալ երկրորդ Ս. Պողոս», «սյուն քրիստոնեության», «ապավեն տառապելոց», «հայր քրիստոնեից», «լուսատու ջահ քրիստոնեության»: Միրզա թե՛ Նյութապես և թե՛ բարոյապես սատար հանդիսացավ լատին Հիսուսյան հայրերուն: Ինքն էր, որ Բոմբեյ և Սաթետ քաղաքներուն մոտ հողեր գնեց և նվիրեց անոնց, իր նյութական օգնությամբ Հիսուսյանները Ակրայի մեջ կոլեջ բացին: Տիրեալ զացող առաջին միսիոնարներուն ծախքն ալ ինք հոգաց, իսկ Երուսաղեմի հայոց Պատրիարքարանին վեց հազար ռուփի նվեր դրկեց:

Միրզա ոտանավորներ ալ դրած է պարսկերեն լեզվով և հնդկերեն: 1648-ին Շահ Ջեհան իր աթոռը Ակրայեն Դելհի կփոխադրե, կիսնդրե Միրզային, որ ներքողական մը գրե փր մասին: Միրզա կկատարե թագավորին խնդրանքը, բայց ոչ թե Ջեհանը կփառաբանե, այլ իրավ թագավորը՝ զԱստված: Սակայն գոռոզ արքան ոտանավորին մեջ զանազան տեղեր հիշված Աստուծո՛ւ անունը վերցնել կուտա և իր անունը կդնե: Միրզա կմեռնի 1656-ին Դելհիի մեջ:

Աքբար թագավորի պալատին պաշտոնական թարգմանիչը՝ Դոմինիկոս Փեթեզ, հայ մը եղած է, որ լատինացուցած է իր անունը:

1557—1559 թվականներուն Ֆրանսացի իշխան Ժան Ֆիլիպ Բուբրոն կայցեղե Աք-

բարի. Թագավորը անոր կնուսթյան կուտա հայ օրիորդ մը՝ Հուլիանե, որ պալատին մեջ բժշկութիւն կրնար և ըստ ումանց՝ Աբրարի հայ կնոջ՝ Մարիամ Բեգումի քույրն էր։ Հուլիանե հիմնեց Ակրայի հայոց եկեղեցին 1562-ին. թէ՛ ինք և թէ՛ իր ամուսինը թաղված են աղ. եկեղեցիին մեջ, որ հիմա չափանկարաւ Ս. Պետրոս եկեղեցւոյ շէնքի տեղումն է։ Շատ հարցուփորձերն ետք միայն լատին քույրեր ձեռնադրուած խոստովանեցին, որ հայկական է այդ եկեղեցին։ Ժան Բուրբոնի թոռն թոռը Հնդկաստանի նաւթար քաղաքը կերթա և իր երեք հարյուր հետեւորդներով հոն կրնակի. մատուտ կ'ունաւ փառքանեղ կուտա, որ իր քահանան կոմսնա մինչև 1743։

Ակրայի հայ գերեզմանատան մեջ Բուրբոն ընտանիքին շատեր թաղված են. ամենցանի վերջինը Աննա խանումն է, մեռած 5-հոգւմար 1855-ին։

Անգլիոյ Զեյմա Ա. Թագավորը 1609-ին, զնդապետ Վիլյամ Հոկինսը Զեհանկիր կայսեր կողքին՝ Հնդկաստանի հետ առևտրական կապեր հաստատելու համար Զեյմաի պատգամավորը մեծ պատիւներով կրնողունի Զիհանկիր։ Թագավորը տեսնելով, որ զնդապետը ամուսնի է, կամուսնացնել դայն հայ օրիորդի մը հետ, որուն մասին Հոկինս իր հոշնքով մեջ կգրէ. «Օրիորդը հայ քրիստոնյա մըն էր և ամենեւնի հին քրիստոնյաներու ցեղին... և տեսնելով, որ ան պատգամավոր սերունդն էր, ամուսնացաւ հետը»։ Հոկինս և իր հայ կինը կ'մեկնէին Անգլիա. ճանապարհին Հոկինս նազովն մեջ կ'մեկնէին (1613 մայիսին) և կ'թաղվին Իոլանդաւ։ Հաջորդ տարին զնդապետին այրին կ'ամուսնանա անգլիացի. նազապետ Դովեքստին հետ և 1617-ին երկուքը միասին Ակրա կուգան այցի։ 1623-ին Դովեքստին հոլանդացիներին կ'ապանկի։ Այս հայ տիկինը առաջին անձն է, որ Հնդկաստանն Անգլիա կայցեցելն։

Ակրայի հայոց գերեզմանատան մատուտը ունի նա արձանագրութիւնը. «Համագեալ ի յայս տապանս Փիքաշին տրդին մղտնի Մարտիրոս Զուլայի, վաղճանեցաւ ի Ակոռայ քաղաքի և անարանքն ետ Անտուոյ վասն իւր հոգոյն. թիվ հայոց ՌԿ»։

Հնդկաստանի Պենջաբ Շահանաբի ամենեւնի հին քրիստոնեական արձանագրութիւնն է այս և մատուտն ալ ամենեւնի հին կանգուն մնացած սրբավայրը։

Ակրայի մեջ հայ գերեզմանատունն և սուլն փոքր մատուտն գատ որեւէ հայկական հետք չգտանք։ Գերեզմանատան մեջ կան հարյուրի ամէկի դամբարաններ. ամենցանի ամենեւնի հին արձանագրութիւնը

1611 թվականը կրնուի Վերջին հայը, որ թաղված է Ակրայի հայոց գերեզմանոցը, գորավար Հակոբ Պետրոսյանի թոռն թոռն է, մեռած 5 հոգիս 1927 թվականին։

Աքրայի Թագավորի օրով և հաջորդ դարուն հայերը բաղմացած են Ակրայի մեջ։ 1614—1675 թվականներուն 7 քահանաներ՝ Ասատուր, Միսիթար, Սուրիաս, Զաքարիա, Հովհաննես, Բաղդասար և Հարութուն հովիւն են Ակրայի հայութիւնը։ Ժէ դարուն հայերը քարվանսարայ մըն ալ տնեցած են այստեղ, որ ժողոված է իրեն կեդրոնատեղի ճամբորդող հայ վաճառականներուն։

Ակրայի հայոց դերեզմանատան մեջ կա դամբարանը հայազգի Ուստա Շահնազար խանի, որ մեռած է 1784 ապրիլ 25-ին։ Շահնազար խանը մեծ համբավ ունեցած է թուրքերէ շինելու արվեստին մեջ։

Ակրային 24 մղոն հեռու կգտնվի Ֆաթիպուր Սիկրին, որ Աքրայի Թագավորի պալատը եղած է, հիմնված 1568-ին։ Այստեղ դեռ կանգուն է «Հայ Թագուհիի պալատը»։ Այդ պալատին մեջ ապրած է Աքրայի Թագավորի Թագուհին, որ ազգով հայ էր՝ Ասրիամ Զամանի Բեգում անունով։ Հայ Թագուհին պալատը գեղակերտ շէնք մըն է, որուն դանազան մասերուն մեջ կընկան հայկական խաչեր։ Ի տարու սկիզբը լուղաներկ պատերն մը գտնվեցաւ, որ կընկալացնէ։ Աքրայի Թագավորը իր հայ Թագուհի Մարիամ Բեգումի հետ Հայ Թագուհին հայկական սիրուն խաչ մը կրնու իր վրին վրա։

Ակրային 126 մղոն հեռավորութիւն վրայ կգտնվի Հնդկաստանի մայրաքաղաք Դելի, որը նույնպէս հայեր ապրած են անցյալին մեջ։ Թաղաքարանին մեջ հիշատակարան մը կա, ըստ որում 1781-ին Դելիի մեջ հայկական եկեղեցի շինված է։ 1715-ին Մոկուր կայսրը Դելիի Տ. Ստեփանոս հայ քահանային կհանձնէ Կալաթային Դելիի եկող անգլիացի պատգամավորները դիմաւորելու պաշտոնը։ Այդ ժամանակաշրջանին հայերը եկեղեցի ունեցած չուրաւ են, որ համալսարան կործանած է 1739-ին, երբ Դելիին ռադուքանդ եղավ Նադիր Շահի զորքերն։ Մինչև այսօր Դելիի մեջ կա միակ գերեզմանատուն մը, որ կան 6 հայ գերեզմաններ։ 1755-ին Դելիի ծնած է գորավար Հակոբ Պետրոսյան։ Պետրոսյան 12.000 զորքի հրամանատար էր և իր սպաններն 40-ը հայեր էին։ Պետրոսյան մասնակցած է շատ ճակատամարտերու և մեծ համբավի տիրացած է իր քաջութեան համար։ Ան մեռավ 1850-ին Հնդկաստանի Դուլայի քաղաքին մեջ։ Ի պատիւ իրեն թաղման ժամանակ 95 թուրանթ արձակած են հալասար իր կյանքի տարիներու թիւին։ Զորա-

վար Պետրոսյան 70 տարի համատարմությամբ և քաջությամբ ծառայած է Հնդկաստանի: Այս զորավարը Գուալիորի մեջ եկեղեցի կառուցած է և իր ծախքով քահանայաճած է: Այդ քաղաքին մեջ 30 հայ ընտանիք ապրած են, ամենքն ալ իր ծառայության մեջ: Երբ հայերուն թիվը կնվազի, զորավարին բարեպաշտ կինը՝ Հելեն եկեղեցվո զգեստներն ու անոթները կալկաթայի և Զուլֆայի հայոց եկեղեցիներում կդրվեն: Զորավարի որդին՝ Հովհաննես հորը օրինակին հետևեցավ և անոր նման կտրիճ և անվանի զորավար մը կդառնա: Դժբախտաբար 1857-ին, Ակրայի ապստամբության ժամանակ, ան զոհ գնաց իր մահամեղական ծառաներու դավադրության և սպանվեցավ 43 տարեկան հասակին մեջ:

Ժէ դարում Դելիի ապրած է հայ նշանավոր բանաստեղծ Սարմադ, որ պարսկերեն լեզվով բազմաթիվ գազելներ և ոտբայաներ գրած է Հաֆիզի և Օմար խայամի հետևողությամբ: Սարմադ իբրև վաճառական Պարսկաստանն Դելիի կուգա, բայց փոխանակ վաճառականությամբ զբաղելու, հինգու ֆաթիր մը կըլլա: Կշահի Զեհան կաթեր և անոր որդւոլուն՝ Դարա Շիկոյի համակրությունը:

Սոտ 300 տարի անցած է Սարմադի մահեն, բայց տակավին ան կհարգվի հինգուներեն և մահմեդականներեն, որոնք իր գերեզմանին վրա մոժ կվառեն, խունկ կծխեն և ծաղիկներ կսփռեն. այս բանին մենք ևս ակնատեսն չալանք: Սարմադ Հնդկաստանի մեջ ճանչցված է իբրև սուրբ և գիտնական:

ՋԻՆՍՈՒՐԱՆ, ԵՐԵՔ ՀՈԳԻՆՈՑ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ

Մարտ 20-ին, արժանապատիվ Տ. Պողոս քահանայի հետ կայցելեմ Զինսուրահ, Կալկաթային 36 մղոն հեռու գյուղաքաղաք մը, որ կկոչվի նաև Զիչրա: Ժէ դարեն տկայալ բարգավաճ հայ գաղութ մը կըլի: Եղած է այստեղ, որ վաճառականությամբ զբաղած և իր գոյությունը շարունակած է մինչև ժի դարու կեսերը:

Հեռվին կնշմարենք հայ եկեղեցվո զանգակատունը, որ կկոթողանա մոտք եթերին մեջ: Փողոցներուն անկյունները նշանատախտակներ կան, որոնց վրա անգլիերեն «Արմինիքն չրը» (հայոց եկեղեցի) գրված է և նշանով մը ցույց կտրվի հայ եկեղեցվո ուղղությունը: Միւր ինքնաշարժը կանգ կառնեն եկեղեցվո պարիսպին մեծ դարձասին առջև: Վար կիջնենք վաթսեք դուռը, ոչ լսող կա և ոչ ալ բացող: Մեր մեքենավարը կհանդիպարիսպին հյուսիս-արևելյան

որմին վրա բարձրանալ և լուր տալ ներսի բնակիչներուն:

Դուռը կբացվի. մեզ կդիմավորեն Զինսուրահի հայ բնակիչները, թվով երեք հոգի, իրենց հինգու ծառաներով: Ընդարձակ շրջափակի մը մեջն ենք. ամեն կողմ կանաչություն, տուններ, ծառեր և մարգագետին: Տ. Պողոսի հետ կմտնենք Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին աղոթելու, մինչ այլակրոն սպասավորները կհնչեցնեն զանգակները: Ռոմանական ոճով կոկիկ, սիրուն տաճար մըն է այս, կառուցված 1695-ին. քրիստոնյա երկրորդ հին եկեղեցին Բենգալ նահանգին և հնդկահայ եկեղեցիներուն հնագույնը:

Մոտ հարյուր դամբարաններ կան Ս. Հովհաննես եկեղեցվո ներսը և բակին մեջ, որոնցմ 28-ը սրբավայրին ներսն են, մին «Պետրոսի խաչիկի որդւոյ», կառուցված 1734-ին, նույնիսկ բմին վրա է՝ սեղանին առջև: Բնմին շուրթին մեջտեղը արուղի վրա հիշատակարան մը կա, որուն տապալանադուր բառը խիստ ուշագրավ է. ըսել կուզվի անշուշտ, որ Պետրոս խաչիկի դամբարանը առաջնորդող դուռն է: Հայեր սովորություն չունին եկեղեցվո մեջ մեռել թաղել: Հնդկաստանի հայ եկեղեցիները բացառություն կկազմեն: Հյուսիսային դասին մեջ եկեղեցին կառուցողին, խոջա Հովհաննես Մարգարի դամբարան է: Մարգարյան ընտանիքը մեծահարուստ և շատ ազդեցիկ եղած է ոչ միայն Զինսուրահի, այլ նաև ամբողջ Հնդկաստանի մեջ:

Զինսուրահի Ս. Հովհաննես եկեղեցվո բարձրագույնը կռահարկ զանգակատունը կառուցած է սոխկին Սոխիա Բագրամ 1822-ին: Անոր ներքև կգտնվին բազմաթիվ դամբարաններ: Հարավային կողմը Բեզուրով ընտանիքի գերեզմաններն են, իսկ եկեղեցվո մուտքին Ղարաբաղի վերջին հայ իշխանին տանկանն է սա վիմադրությունը: Եր քաղցր իշխտակ մեր սիրեցեալ հօր Դավթի որդւոյ Ֆրիդոն Մելիք Բեզարի, որ վերջին իշխան Ղարաբաղի ի Քիֆլիկ նահանգի ի Կովկաս, ծնեալ ի մէյ (մայիս) և վախճանեալ ի Զինսուրա ի 22 տեղտեմբեր 1884: Իս եմ յարուկիւն և կեանքաւ իշխանը ապրած է 89 տարի: Իր որդին ալ, նշանավոր գիտնական, հնագետ Հովսեփ Մելիք Բեզար հոս թաղված է 1907-ին. սա էր, որ 1892-ին «Արա» անունով անգլիերեն պարբերաթերթ մը սկսավ հրատարակել, պաշտպանելու համար Հայոց դատը ընդդէմ թուրքերու բարբարոսությունը: Այս դամբարաններեն քիչ մը անգին, զանգակատան արևելյան կողմը, ժամկոչի մը հանգստարանն է. հայ իշխան և հայ ժամ-

կող, քով-քովի Հայ եկեղեցվո հովանիին ներքև...

Բակին մեջ, երիցատան հարավային կողմը հոր մը կա, որուն շուրջը՝ փոքր ավազան մը: Անոր քով արևի ժամացույցն է, որ ճշգրտորեն օրվան ժամերը ցույց կուտա: Երիցատան մեջ կհյուրասիրվինք թեյով: Հյուրասրահի որմերեն դեմ դիմաց կախված են երկու մեծ եկեղեցականներու՝ Խրիմյան Հայրերի և Թորգոմ պատրիարքի նկարները:

Տարվան անգամ մը՝ Ս. Հովհաննես Մկրտչի օրը, որ տոնն է սույն եկեղեցվո, կալկաթայի հայերը ուստի կուգան Վիշրա, ուր սուրբ պատարագ կմատուցվի և հոգեճաշ կտրվի ուխտավորներուն: Մյուս օրերուն լոռած է աղոթասացութունը, թեպետ առավոտ և երեկո, բարերարներու կտակի տրամադրությանց համաձայն, կհնչեն եկեղեցվո զանգակները:

Պիտի մեկնինք երեմնի հայաշատ այս կեղրտեն, ուր հիմա միայն գերեզմաններ կան և անոնց երեք հավատարիմ պահապանները, որոնք արդեն իրենց ձմեռին մեջ են, այլի տիկին Աննա Հարությունյան (ժամկույն կինը), պարոն Ավդալ Թադևոսյան և պարոն Գրիգոր Կարապետյան: Վերջինս երկար ժամանակ տիրացություն ըրած է հնդկահայ եկեղեցիներու մեջ, լավ շարական գիտեր և գրաբար ընթերցումը անթերի էր. տապանադրությունները այնքան ճշգրտորեն կկարդար, որ միայն հիացում կրնայի ունենալ իրեն հանդեպ: Ավաղ, սակայն, այս պատվական հայր ամիս մը հուլիսից իր մահկանացուն, Չինսուրահի հայության թիվը երկուքի իջեցնելով:

Կմտներ եկեղեցի և հավարտ առավոտյան ժամասացության «Հոգուց» մը կարտասանենք, «... և մանապես այնոցիկ, որք ընդ հովանեաւ արքայ եկեղեցոյն են հանգուցեալ»: Կմեկնինք մենաստանեն: Նու կնայիմ. բոլոր շենքերն և կառույցներն վեր, հարստորեն կբարձրանա եկեղեցվո զանգակատան գմբեթը, որ իրեն վկա ճշմարիտ Լուսին, կտարածե իր հովանին այս այլակրոն քաղաքին վրա:

ԴԱՐՋԻԼԻՆԳ, ՀԻՄԱԼԱՅԱՆ ԼՈՒՆԵՐՈՒ ՀԱՅ ԴԱՂՈՒԹԸ

Դարջիլինգ Հնդկաստանի ամենեն օդատուն և գեղեցիկ ամառանոցն է, հաստադրված Հիմալայան լեռներու մեկ թևին վրա: Կայցելենք այնտեղ մարտ 25-ին կալիթթաբնակ հայ ազգայիններն պարոն Մարգար Մարգարյանի հետ:

Նախ օդանավով կմեկնինք Բակուկրա, թռչելով հնդկներու սուրբ գետի՝ Գանգեսի վրայեն: Ապա առանձին տակսիով կշարունակենք մեր ճանապարհը թեյի ընդարձակ տափաստաններու, լեռներու բարձունքներու մյուս թառած և երբեմն ալ՝ անոնց հովանդաններեն կախված հինավուրց դուղերու և անդնդախոր հովիտներու մեջեն: Ինչ սիրուն են եղնիկներու երամները, որոնց հաճախ կհանդիպի ճամբորդը, և որոնք շուտով կանհասանալի լայնածիր անտառներու մեջ: Ահա վայրաշարժը, որ հեկավով և շարունակ օդին մեջ ծուխ արձակելով ու լեռներու քովերեն պտուտքելով կվերելակ. մեզի հետ է ան, համընթաց, բիշ անգամ իրմե կբաժնվինք: Ահա ան կանցնի կամուրջի մը տակեն ու հետո լայնարձակ բոլորակի մը վրայեն պտուտքելով կշարունակի իր ուղին. հնարամիտ միջոց մը բարձրունքներ նվաճելու: Ու երբ յուրաքանչյուր նվաճված բարձունքն վար կնայինք, անդունդը մեր առջև ավելի կմեծնա, կլայննա ու ամենհի, սոսկավիթխար կերպարանք մը կզգենու: Այսպես են Հիմալայան լեռները: Հապա սա նոճիները, երկնամեքձ, մշտադալար, «խոյանշարժ», ինչպես պիտի ըսեր «Ներաշխարհ»-ի հեղինակը՝ Տիրան Չրաքյան, և որոնց մեջեն հավերժությունը տեսավ: Արդյո՞ք բուդդայականներն ալ, որոնց հիշատակարաններով հարուստ է այս շրջանը, նույն հղացքը ունեցած են:

Չորս ժամեն կհասնինք Դարջիլինգ, ծովու մակերևույթին մոտ 7000 ոտք բարձունքի մը վրա փռված ու կորսված ծով մորձությանց մեջ: Կիջանինք «Բել վու» պանդոկը, որուն տնօրենը՝ հայ մըն է՝ պարոն Գեվորգ Բեդելյան, վաթսուներ անց համակրելի ջուղայեցի մը, որ 15 տարին ի վեր Դարջիլինգ կբնակի և տեղացիներեն ճանցված ու հարգված է: Այցելունքու համար պատրաստած է համառոտ ուղեցույց մը:

Դարջիլինգ կաթոլիկներու և անկլիկալիներու քսանն ավելի վարժարաններու կեդրոն մըն է: Քաղաքին յուրաքանչյուր անկյունը կհանդիպի վառվռուն, կապույտ ու սանողներու ամեն ազգե և կրոնք: Հնդկաստանի տաք կլիման կպարտադրե, որ եկեղեցական կազմակերպություններ, այսպիսի հովասուն վայրերու մեջ դպրոցներ բանան, մեկ կողմն գիտություն ջամբելով, և մյուս կողմն ալ իրենց փարախեն ներս նոր ուշաարներ բերելով: Այս դպրոցներու տարեթիվները շատ սուղ են և այդ պատճառով միայն հարուստները իրենց զավակ-

ները կրնան հոն դրվել հայեր ալ-կգտնվին այդ հարուստներուն մեջ:

Իրիկնապահին պարոն Մարգար Մարգարյանի հետ կայցելենք լատինաց աղականաց վարժարանը՝ Լորենցո Կոնվենտ, Գրեյսմորաբար Կանադային Կեկած կաթոլիկ եկեղեցական հայրեր և մայրապետներ կաշառտնալարեն այստեղ: Մեզ պատցնող բահանան Սոներային է: Եկեղեցի կառաջնորդվինք: մայրապետներ հսկում կկատարեն: Իրիկնային խորհրդավոր պահ մը կհայի հոգալույս... Անգղալարար ծունկի կուգամ և կունկնդրեմ իրենց աղոթասացությանց և սաղմոսերգությանց, որոնք, դժբախտաբար, քիչ մը հասնեալ կարտասանվին:

Հովիվը կժանոթացնեն մեզ դպրոցի տնօրենին, որ մայրապետ մըն է: Մեր խնդրանքին վրա, հայ աշակերտուհիները մեզ մոտ կընրեն: բոլորն ալ անգլիախոս են: բառ մը իսկ հայերեն չեն հասկնար, միայն գիտեն, որ հայ ընտանիքներու զավակներ են: Կհարցնեմ անունին — Ինգրիդ Թադոս, Կարոլին Ականուր, Իվան Արաթուն, Պրենտա Արաթուն: Մնա՞ք բարով հայ անուններ: ու իրենց անուններուն հետ օտարացած է նաև իրենց հոգին:

Հաջորդ օր կայցելենք լատինաց Ս. Հովսեփ կոլեջը: 28 հայերը, գրեթե ամենքն ալ Հիսուսյան, մեծամասնությամբ Կանադային, դաս կուտան այս հաստատության մեջ: Տնօրենին թույլտվությամբ, կժանոթանամ հայ աշակերտներուն — Լեո Լուկաս, Նոնի Սիմոն, Ալֆրեդ Սիմոն և Հայկ Սիմոն: Ու պատկերը նույնն է, ինչպես վերը հիշեցինք:

Մնաց անգլիկաններու Ս. Պողոս կոլեջը: Այստեղ ևս կիսովմանք: Գեղեցիկ ու բարձրագույն վայր մը, որուն նմանը այլ ուրեք տեսած չէի: Սույն կոլեջի հայ աշակերտներուն ալ ծանոթացանք — Զան Զետոր, Մալքոմ Բլինկո և Արշակ Սարգսյան: Փա՞ռք թեզ, Տե՛ր, որ վերջապես հայ անունով ուսանողի մը հանդիպեցանք: Արշակ Կալկաթայի հայոց ճեմարանին է, հայերեն կխոսի և ծրագրած է Անգլիա երթալ և իր ուսումը շարունակել:

Կաթոլիկ և անգլիկան վարժարաններու տնօրեններուն հավանությունը առինք, որ հինգշաբթի առտու, Ս. Անդրեաս անգլիկան եկեղեցվո վտղոր մատան մեջ առավույան ժամերգություն կատարենք հայ ուսանողներուն համար և հետո սուրբ հաղորդություն: տանք իրենց: Զառարկեցին, ընդհակառակը, շնորհակալություն հայտնեցին ներկայացուցած խնդրանքիս համար և կարծես կերպով մըն ալ ուրախ էին, որ իմ

միջոցով Դարչիլինգի իրենց դպրոցներուն հայ տղաներն ու աղջիկները առիթ պիտի ունենային Հայաստանյայց եկեղեցվո սուրբ հաղորդությունը՝ ճաշակելու:

Հայ ուսանողներին զատ Դարչիլինգ ունի նաև հայ բնակիչներ: անոնցմե հիշեցինք արդեն պարոն Գ. Բեդելյանը: «Սյուրս» պանդոկի տնօրենն ալ նույնպես հայ է, Արշավիր Գրիգորի Գալուստյան, Զուլային, շնորհալի երիտասարդ մը: Մյուս հայը Զան Դիմետրեոսն է, կզբաղի պետական հաշվապահությամբ: Իսկ գաղութին նահապետը 81 տարեկան ծերունի մըն է, Սեթ Սամվել, վառվոտ, եռանդալից, Հարուստ է կրսին իրեն համար, բայց ո՛չ մեկ հետաքրքրություն ունի հայության հանդեպ:

Հինգշաբթի առավույան ժամը 7-ին Ս. Անդրեաս եկեղեցվո մատան մեջ էին Դարչիլինգի հայ համայնքի անդամներն ու աշակերտները, ինչպես նաև Ադգիս-Աբերային և Կալկաթային երկու հայ ընտանիքներ, որոնք օգափոխության եկել էին: Խոսեցա հաղորդության նշանակության մասին և ապա խոսքս մասնավորելով ուսանողներուն, թելադրեցի, որ սուրբ հաղորդության ճաշակումով, լեցվին նաև մեր սուրբերուն և նահատակներուն հոգիով և ապրին իբրև ճշմարիտ հայեր, նվիրված Հայ Ազգին, Հայ եկեղեցիին և Հայ Հայրենիքի ծառայության:

ԱՌԱՔԻՆԱԶԱՐԿ ԶԱՅՐ

Ասանսոլ քաղաքը, որ 136 մղոն հեռու է Կալկաթային, նշանավոր է գործատուներով, բայց մանավանդ իր ածխահանքերով: Հոս կրնակին երկուտասնյակ մը հայ ընտանիքներ: Հայերեն ոմանք՝ Սարգիս Մկրտչյան, Մկրտիչ Ղուկասյան, Բագրատ Հարությունյան, Անդրանիկ Հովհաննեսյան, Արշալույս Աղեքսանդրյան և ուրիշներ մեծ պաշտոն ունին երկաթի և ածխահանքի գործարաններուն մեջ:

Մարտ 31-ին, կիրակի առավոտ, Ասանսոլ պատարագեցի և քարոզեցի անգլիկաններու Ս. Պողոս եկեղեցվո մեջ, ուր համայնքին բոլոր հայերը ներկա էին: Սույն եկեղեցվո հյուսիսային որմին վրա անգլիկան լեզվով հետևյալ հիշատակարանը կարդացի, զոր թարգմանաբար կներկայացնեմ.

«Ի նուիրական յիշատակ Աղաբեկ Առաքելանի: Աղաբեկ կառավարիչ Արքաբան և Ածխահանաց ընկերութեանց և ի Սիդարամպոր բնակելոց: վախճանաց զերկրպետր զկեանս իւր յինն ղեկտեմբերի 1892, ի տիս 37 ամաց և 9 ամսոց:

Յիշատակարանս. այս կառուցման առաւել-
քան ի հինգ հազար Ձեմինդարի գործաւո-
րաց, որոց կառավարիչ էր և այլ Բենկալ-
բարեկամաց, ի նշան խոր գնահատանաց և
յարգանաց Որբ գործեցին ի ներքոյ [հրա-
մանաց] նորա, մահուամբն նորա կորու-
սին զտէր մի բարի և արդար, և որբ ճանա-
չէին զնա՝ զբարեկամ մի ճշմարիտ»։ «Յա-
նեղծ և յանարատ և յանթառամ ժառանգու-
թիւնն որ պահեալ է յերկինս. ձեզ» (Ա.
Պետր., Ա 4)։

Կյանք և հավիտենական լույս մշտն-
ջենի իր հայու ազնվական հոգիին։

ԱՍՏՎԱՍ ԼՈՒՍԱՎՈՐՆ ՄԵՌՆԵՐՈՒՆ ՀՈԳԻՆՆԵՐԸ

Բոմբեյին մինչև Մադրաս, Կալկաթա,
Ռանգուն, Սինգապուր, ու դեռ մինչև հեռա-
վոր, Զավա հայ մեռելները կպահեն Հայ Ե-
կեղեցին, հայ դպրոցը, քահանաները, աղ-
քատները և ազգային բոլոր հաստատու-
թյունները։ Անձնուրաց, կրոնաբույր հոգի-
ներ երկար տարիներու իրենց արդար վաս-
տակը՝ զբամ, շենքեր և արժեթղթեր կտա-
կեր են Եկեղեցիին, որպեսզի իրենց մահն
ետք այդ սրբազան հաստատութիւնը և ա-
նոր կապոված հայ ժողովուրդը միշտ շին ու
պայծառ մնան, և երբեմն ալ աղոթքի մըր-
մունջ մը արտասանեն իրենց հոգիին լուսա-
վորման համար։ Ու հաճախ հուզումով է, որ
մաքը կիմանա, թե ալ արդար վաստակը
ի նշանասելի նեղութիւններով ու զրկանք-
ներով ձեռք բերած են անոնք։

Քանի որ կտակները եղած են, ի նշ կմնա-
նորեմն ապրողներուն ընելու։ Տնտեսել
մեռելներուն թողած գումարները։ Ի նշպես,
վեճերով և կոփվելներով։ Ի նշպես այլ ուրիշ,
հեռատանյա այս ախրերուն ժողովուրդին ալ
քաջածանոթ է վեճի, կագի ու կոփվելի Պատ-
ճառ. մեռելները ապահոված են զիրենք
նյութապես ու տարիներ ի վեր առանց ա-
ռաջնորդի մնացած ըլլալուն, յուրաքան-
չյուր հայ ինքը առաջնորդի դեր ուղած է
կատարել։ Զուղան, ինքն ալ առանց առաջ-
նորդի, բավականացած է համայնքներն ու-
մանց միայն քահանա ղրկելով։ Եվ ի նշ
կընեն այդ ղրկված քահանաները։ Նրանոն
տարի առաջ այս թեմը այցելող մտավորա-
կան մը կուտա պատասխանը. «Քահանա-
ները հարկադրված են Հնդկաստան և Զա-
վա երթալ, ինչպես ուրիշ քաղթականներ,
որամ շահելու և վերադառնալու համար»։
Պատվավոր ազգային մը, որ երկար տարի-
ներ ի վեր մոտեն ծանոթ է անոնց կյան-
քին և գործունեութիւնն, սրտցավորեն
կարտահայտվեր այսպես. «Մեր քահանա-

ները Զուղան կըրկվին երեք տարվան հա-
մար և ըստ օրինի այդ ժամանակաշրջանի
լրումեն ետք պետք է վերադառնան. սակայն
չվերադառնալու բազում պատճառներ կհա-
րուցանեն ու երեք տարին կըլլա վեց, ինը,
տասներկու, մինչև այն աստիճան, որ ժո-
ղովուրդը երկպառակվի Քահանաները կա-
նոնավորապես «մեռելներն» կգանձեն ի-
րենց թոշակը, իսկ ջողջերեն՝ իրենց նվեր-
ները և բավականաչափ գումար դիզելն
ետք կվերադառնան Զուղա, տուն շինել կու-
տան ու հանգիստ կյանք մը կանցնեն։
Դրական գործ, հովիւթյուն, ժողովրդի հո-
գետը և կրթական կյանքի մշակում մի՛ պն-
կալիք անոնցմէն։

Ու ճիշտ խոսեր է ան, որովհետեւ մենք ևս
ամենուրեք նույն կացութեան աշխատես ե-
ղանք։ Քահանայի և ժողովրդի միջև անհա-
մաձայնութեան և անսիրելութեան բուն
պատճառը մամոնային ջուրջը կկեղբոնա-
նա։ Բացառութիւնն է՝... այդ մասին խո-
սիլը ավելորդ է։

«Մեռելները կպահեն Հայոց Եկեղեցին»։
Ասոր լավագույն օրինակը՝ Մադրասի Ս.
Աստվածածին եկեղեցին է, կառուցված
1712-ին, և զոր կայացելիւ ապրիլ 4-ին։

Մադրաս... հայ լրագրութեան ծննդա-
վայրը, երբեմնի բազմամարդ ու շեն հայ
գաղութը։ Հիմա հոն կընակին միայն վեց
հայեր՝ հանգուցյալ Տ. Սահակ քահանա
Հակոբյանի տիրուհին՝ Մաղիկ և զավակնե-
րը՝ Անդրանիկ, Վարդուհի և Նվարդ ու նաև
Եկեղեցվո ժամկիւր՝ պարոն Ավետում Գաս-
պարյան և վիճակավոր քահանան՝ Տ. Ե-
ղիազար Քեշիշյան։ Բնակեց անոնով հայ
մըն ալ կապրի Մադրասի մեջ, սակայն չի
հետաքրքրվիր Հայ Եկեղեցիով։ 200 մղոն
հեռու։ Սեգունդերբադ քաղաքին մեջ կընա-
կի հայ տիկին մը՝ Մելիքի Ռորինզոն, ա-
մուսնացած անգլիացիի մը հետ, և որ ա-
մեն հոգարի Զատիկին անպայման Մադրաս
եկեղեցի կուգա՝ սուրբ պատարագին ներկա
ըլլալու և հաղորդվելու։ Քանի մը տարի ա-
ռաջ ուրիշ երկու հայեր ալ կան եղեր, բայց
շատոնց իրենց մասին որեւէ լուր չկա։

Տ. Նղիազար մեկնած է Բոմբեյ եկեղեցա-
կան գործով։ Անդրանիկ Քեշիշյան և ժամ-
կուր զիս կառաջնորդեն եկեղեցին։ Մեկ
կղիմավորեն եկեղեցվո հինգ այսպիսուն ծա-
ռաները. անոնցմէ մին կնչեցնեն եկեղեց-
վո զանգակները դաշն, մեկնուել. այսպես՝
նախ երկու զանգակները երիցս, ապա վի-
ցը միասին. յուրաքանչյուր ձեռքին մեջ երեք
զանգակի չվանները բռնած, ձախ, աջ, ձախ,
կանգ կանեն, հետո դարձալ ձախ, աջ, ձախ
և կանգ կանեն ու այսպես կշարունակեն 12

անգամ. ապա վեց չվաններն ալ մեկ անգամեն կքաշեն ու կկենան: Նույն այս կերպով կհնչեցնեն Ս. Էջմիածնի զանգակներն ալ: Կհիանամ զանգակահար սպասավորին ճարտարության վրա. Ֆրանսիս է անունը և 40 տարիներն ի վեր այդ պաշտոնը կկատարեն ամենայն հավատարմությամբ և ճշտապահությամբ: Այդպես է մեռելներուն կտակը ու ինքը հավատարիմ գործադրողը անոնց իր ճարտար զանգակահարությունը սորված է ջուղայեցի քահանաներեն:

Օտարազգի այս հինգ սպասավորներն ալ «Աստված լուսավորե մեռելներուն հոգիները» կըսեն. ու սրտաբուխ է այդ մաղթանքը, որովհետև անոնց կտակներուն շնորհիվ է, որ իրենց ամսականները կստանան, հավառակ անոր, որ առավոտեն մինչև երեկո անգործ կնստին: Ի՞նչ բարի եղած են մեռելները... Իսկ ողջները... ճիշտ հակառակը, որովհետև չեն խորհիր իրենց ամսականը ավելցնելու իսկ:

«Աստված լուսավորե մեռելներուն հոգիները», թե՛ հարուստներուն և թե՛ աղքատներուն մաղթանքն է այդ: Հարուստները, շնորհիվ մեռելներուն թողած կտակներուն, ազգային հաստատությանց կամ որևէ նպատակի դրամ տալու պարտադրանքին տակ չեն: Իսկ աղքատները. բարեկրոն մեռելները անոնց մասին ալ խորհած են և ազատած զանոնք իրենց օրվան հացը ճարելու տաղտովեն: Օտարներու հետ ամուսնացած հայեր ալ կալոթեն մեռելներու հոգիներուն համար, անոնց կիները կամ ամու-

սիները եկեղեցի կուգան ընդհանրապես միայն այն ժամանակ, երբ թշվառության մեջ ինկած են ու կդիմեն Հայ Եկեղեցւոյ վարչության, որովհետև Եկեղեցին դրամ ունի: «Հավիտյա՛ն օրհնյալ ըլլա հայ մեռելներուն հիշատակը»:

Բայց ամենեն սրտեռանդ մաղթանքը հայ քահանային շրթներեն կրի. «Ո՛ղջ ըլլան հայ մեռելները», որովհետև անոնք ոչ միայն իր թոշակը կհոգան և այլ հատկացումներ տնօրինած են իրեն համար, այլ նույնիսկ ինքնաշարժ տրամադրելու չափ գումարներ կտակած են, ու նաև ծառաներ... դրախտը երկրի վրա. միայն դիրենք կմտահոգե օդին սաստիկ տաքությունը, բայց անոր ալ դարմանը գտած են—առանց մորուքի և փակեղի, պարեգուտով ման գալ, առանց անդրդադառնալու, որ բարեպաշտ կրոնասերները այդ կերպարանքով քահանաներուն համար չէր, որ ըրած են իրենց կտակները:

«Ո՛ղջ ըլլան մեռելները», անոնց թողած կտակներով եկեղեցիներ կառուցված են ողջերուն համար, որոնք դահեկան միսկ չեն նվիրաբերած: Կբավե միայն, որ ողջերը չմոռնան հիշել մեռելները և աղոթքն անոնց հոգվույն խաղաղության համար:

Հնդկաստանի և Հեռավոր Արևելքի երկրներու հայ մեռելներու հիշատակին բյժ է օրհնություն, որ իրենց գերեզմաններեն իսկ, Ազգին ու Եկեղեցիին ծառայություն կմատուցանեն:

